

Հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի հարցաշար - 2020 թ.

Տևողությունը 150 րոպե

11-րդ դասարան

Տրդատը՝ հայոց մեծաքանքար ճարտարապետը, ժամանել էր Կոստանդնուպոլիս: Երկնաակաց, վեհաշուք տաճարներն ու ակնապարար պուրակները՝ այուրից սեթևեթող տարաթույր ծաղկաստաններով, հիացրին վարպետին: Սակայն ուր էլ գնար, ոտքերն ակամա տանում էին քաղաքի սալարկված հրապարակը, որտեղ անըստգյուտ գեղեցկությամբ բազմած էր Բյուզանդիայի փառքը՝ Սուրբ Սոֆյայի անձեռակերտ տաճարը: Նրա կատարյալ տեսքը, ավա՛ղ, խաթարված էր. հուժկու երկրաշարժն ավերել էր կառույցի պսակ գմբեթը՝ տեղում թողնելով մի լքված դատարկություն: Արծվենի հայացքը լույս կառույցին՝ վարպետը ցավով էր նայում այդ դատարկությանը:

Ոչ մի ճարտարապետ չէր ստանձնել փլուզված գմբեթը վերականգնելու գործը:

Եվ Տրդատն առանց երկմտելու ընդունեց կայսեր առաջարկը: Անգուզական վարպետն իր իմաստուն հանձարով նախօրոք պատրաստեց գմբեթի մանրակերտը՝ մանրագին հաշվարկելով յուրաքանչյուր մանրուք:

Ամիսներ անց որմերին ձուլված չորս հզոր մույթերին հառնեց երանելի գմբեթը՝ նախկինից ավելի շքեղ: Եվ որպես հայ մտքի հավերժող հաղթանակ՝ կառույցը գոտևորող քարին վարպետը փորագրեց՝ Տրդատ:

Հաջորդ օրը կայսրը Տրդատին իր ապարանքը հրավիրեց, խոստացավ անբավ հարստություն, պատիվ, փառք, տիտղոս, եթե համաձայնի մնալ Կոնստանդնուպոլսում:

Տրդատը թեթևակի խոնարհվեց և բարեկրթորեն պատասխանեց.

–

1. Ի՞նչ պատասխանեց ճարտարապետը: Ի՞նչ կպատասխանեիր դու: (3 միավոր)
2. Բնութագրի՛ր Տրդատ ճարտարապետին 1-2 նախադասությամբ: (1 միավոր)
3. Գրի՛ր *ակնապարար, սեթևեթել, տարաթույր, անըստգյուտ, անձեռակերտ, խաթարվել, անգուզական, մանրակերտ, երանելի, գոտևորել* բառերի մեկական հոմանիշ կամ բացատրի՛ր բառակապակցությամբ: (2 միավոր)
4. Կազմիր երկու նախադասություն *դրվագ* բառի բազմիմաստություններով: (2 միավոր)
5. Արտահայտի՛ր բառակապակցությամբ՝ *բարձրուղեշ, երիցս, ազնվագարմ, հողմադաց, թռուցկաժողով*: (1 միավոր)
6. Տրված եռյակներից ընտրի՛ր մեկական բաղադրիչ և կազմի՛ր բարդ ածանցավոր բառեր. նվագածություն – աչառու– ձերբագատվել, տարակուսանք – վայրի – քառակի, գինարբուք – ակնառու– արնագույն, գերազանցիկ–վազքուղի –լուսակիր (2 միավոր)
7. Տեքստից դո՛ւրս գրիր գոյականով, դերբայով, հարաբերական ածականով և դերանունով արտահայտված երկուական որոշիչ: (2 միավոր)
8. Վերածի՛ր աշխարհաբարի՝ «Գնայ ընդ արևմուտս հիւսիսոյ դիտել գերկիրն», «Եւ դարձաւ անդրէն ի աշխարհն իւր»: (2 միավոր)
9. Գրի՛ր շարադրություն «Գրավի՛ր բարձունքը» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)